յանցանաց իշխանաց, և ժողովրդոց, նախնեաց և մերոց, և աղաչեցէք զի յեղիցէ ի վերայ հոգևոր յազգին հայոց Շնորհ և իմաստութիւն իւր սուրբ, զի կարող լինիցուք կալ և մնալ հաստատուն ի վերայ իրաւանց և արդարութեանց Օրինաց մերոց, և ազատապէս Պաշտեսցուք ամենայն սուրբ անուն նորայ, և բարեպէս կառավարեսցուք յազգ և աշխարհս մեր, զի սովաւ դադարեսցի ձայնք զրկելոց, կողոպտելոց, դերելոց, և թշուառացելոց ի յականջէ Արարչէ մերմէ, և անդրադարձն ելցէ ձայն Օրհնութեան, գոհութեան, փառաբանութեան և հոտ անուշից խընկարկութեան, ի աշխարհէ և յազգէ մերմէ առ Աթոռ Արարչին մերոյ առ ի պարծանս բարեխօսչաց սրբոց մերոց և խաղաղութիւն յաշխարհին մերոյ և բարեպէս կեանս հոգոյ և մարմնոյ մերոյ ասա և ի հանդերձելումն ամէն։

Եղև Մաղրասուն Օգոստոսի ամսոյ 15։
Յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773։

Ձերոց փոքրիկ սպասաւոր

Յակոբ Որդւոյ Շահամրի,
Շահամիրեանց։